

Ծանոթագրություններ



W. H. Smith & Sons
London



ԱՅՐԱՐԱՏ

Այրարատ անվանումը որոշ շափով պայմանական է: Այստեղ նկատի լի առնված ժիային աշխարհագրական ընդգրկումը, այլ նաև լեզվա-բարբառային և պղագրական հատկանիշները:

Ինչպես ասված է, ներկա հատորի նյութերի մնացող մեծամասնությունը հավաքել է Եր. Լալայանց Աշտարակ, Օշական և Փարպի գյուղերից և Հրատարակել «Մարգարիտա» հայ բանահյուսուրյան» ժողովածուի Ա. և Բ գրքերում, Թիֆլիս—Վաղարշապատ, 1914—1915 թթ. ։ Ժողովածուի հիշյալ գրքերում զետեղված հերախների գրառման ձևադրերը չեն պահպանվել, այդ պատճառով ներկա հրատարակության համար, որպես կանոն, հիմք են հանդիսացել Հերիաթների տպագրի տեքստերը:

Եր. Լալայանը իր Հրատարակած ժողովածուի գրքերին առաջարան կամ նախարան լի կցել, միայն յուրաքանչյուր հերիաթի առաջին էջի տողատակին դրված համառու ժանոմթության մեջ նշվում է Հերիաթի գրառման ժամանակը, տեղը և ասացողը. լի հեշտում, սակայն, թե ով է գրի առնողը՝ Հայտնի է, որ Հրատարակած Հերիաթների մեծ մասը իրեն՝ Եր. Լալայանի գրառումներն են, բայց այլ ազդյուրների վկայությունից հաջարած է, որ այդ նյութերի մի որոշ մասն էլ ուրիշ բանահավաքների գրառումներն են: Քանի որ հնարավոր լի որոշակիութեան ասել, թե ով է ավյալ Հերիաթի գրի առնողը, նման գեղաքերում նշում ենք՝ Քանահավաքրը անորոշ առումով: Ցավոք, Եր. Լալայանը տողատակի ժանոմթություններում շատ սուլ տեղեկություններ է տալիս ասացողների մասին:

Մեր պրատումները՝ համապատասխան գյուղերից լրացուցիչ տեղեկություններ հավաքելու ասացողների մասին, արդյունք չտվեցին:

1 Ժողովածուի անվանաթերթում հրատարակության թվականը. Հիմք ընդունել Գ. Ս. ստորագրությամբ «Մատենագրությունը» (Տե՛ս «Մշակ», 1914 թ. հունիսի 17, № 130):

Սույն համարի ժանոթագրությունների մեջ նույնությամբ բերվում են նր. Հայացանի հրատարակած տեքստերի տողատակերին գրված տեղեկությունները: Եթե նույն ասացողի մասին նրա պատմած տարրեր հերթափառների տողատակերին կան լրացուցիչ տեղեկություններ, սույն հատորի ժանոթագրությունների մեջ այդ բոլորը ամբողջացվում է մի տեղում՝ առաջին հերթափառի ժանոթագրության մեջ, հաջորդների համար վկայակոչելով՝ անուան այսինչ հերթափառի ժանոթագրությունը:

Նր. Հայացանի հրատարակած հերթափառները՝ սյուժեների ու մատիվների ամբողջական ընդգրկման և գեղարվեստական-արտահայտչական կոլորիտի պահպանան տեսակետից լիբրթեր գրառումներ են, ունենալով հանգերձ լեզվական որոշ թերություններ:

Պահպանելով հերթափառների ամբողջականությունը՝ որոշակի և հստակ ենք դարձրել տեքստերի մատուցումը՝ հնարավոր լատին ճշտելով տրամադրության ու առողջականության նշանները, պարբերությունների ու երկախոսությունների բաժանմանը, ուղղակի և անուղղակի խոսքերի կիրառումը, ինչպես նաև ստեղծելով որոշ հանդիպողականություն ու միօրինակություն լեզվա-արտասանական ձևերի գրության մեջ: Նույն ձևով վարդել ենք նաև այս հատորում օգտագործված ձեռագիր նյութերի նկատմամբ:

Յուրաքանչյուր հերթափառի ժանոթագրության վերջում տրվում են տվյալ հերթափառ վերահրատարակությունները:

1. ՏԱՅԱՐԱՆ ԲԼՅՈՒ ԿԱՄ ԱԼՌ-ԴԻԽՈՏԻ ՆԱՎԱԾ (էջ 27)

Տպագրվում է ըստ նր. Հայացանի «Մարգարիտներ Հայ բանահյուսության» ժողովածուի Ա գրում հրատարակված տեքստի (էջ՝ 125—143), Բանահյալ բողել է հետեւալ ժանոթությունը. «Պատմեց 1912 թ. օգոստոսի 21-ին Աշտարակ գյուղում, նույն գյուղացի Ավետիս Գրիգորյան 66 տարեկան անգրագետ ծերության նույն այս ասացողի պատմած «Կարապես բեկի հերթափառի տողատակի ժանոթության մեջ (տես «Մարգարիտներ Հայ բանահյուսության» Ա գիրը, էջ՝ 169) բանահյալ բառը հայտնում է, որ ասացող Ավետիս Գրիգորյանը ժողովրդի կողմից կոչվել է «Զատ Ավետիս», որպես թի շատ լավ հերթափառությունը»:

Սույն հատորի հաջորդ ժանոթագրությունների մեջ նր. Հայացանի «Մարգարիտներ Հայ բանահյուսության» ժողովածուն համառության համար կոչում ենք՝ «Մարգարիտներ...» Ա կամ Բ գիրը:

«Հազարան բլրով կամ Ալո-Դիխոյի նաղը» հերթափառ ունեցել է հետեւալ վերահրատարակությունները և բարգմանությունները.

«Армянские сказки», Москва, Academia, 1930, էջ՝ 168—193, Перевод и примечания Я. Хачатрянца, введение М. Шагиняна, рисунки художника М. Сарьяна. Այս ժողովածուում թարգմանված մեզ հետարրերոց հերթափառը վերցված են նր. Հայացանի «Մարգարիտներ...» Ա և Բ գրքերից, Թարգմանիլը պահպանել է հերթափառի ամբողջականությունը; Սույն ժողովածուն վերահրատարակվել է 1933 թ. լրացված նոր հերթափառի թարգմանությամբ և վերջում համալիվածուով՝ Ն. Պ. Անդրեեի կազմած Հայկական հերթափառի սյուժեների համա-

սուս Գորկուրային գուգա՞նեռներով։ «Հազարան բլրով» հերթաբը II հրատարակության մեջ տեղ է ունեցել, էջ՝ 190—215։

Հայորդ ծանոթագրությունների մեջ «Ժանդակ» այս աղքատուր համառոտության համար կոչված է՝ «Արմանական սպառազնություն»՝ «Արմանական սպառազնություն», 1933:

«Հայ ժողովրդական ներքիաներ», կազմեց և խմբագրեց Ա. Ղանալանյան, Երևան, Հայպետհրատ, 1950 թ., էջ՝ 33—54։ Այս ժողովածուն սովորական շրջանում հրատարակված ամենածավալուն և ամփոփ ժողովածուն է, որն ունի նաև ընդարձակ առաջարան։ Ժողովածուի մեջ հնտաքրքրող հերթաբները վերցված են եր. Լալայանի «Մարդարիտներ»... «Համապատասխան գրքերից և Գրականության ինստիտուտի բանահյուսական արխիվի ձեռագիր նյութերից։ Թժանդակ այս աղբյուրը հաշորդ ժամանակագրությունների մեջ համառոտության համար կոչված է՝ «Հայ ժողովրդական ներքիաներ», 1950։

«Հայ ժողովրդական բանահիւուուրյուն» (քրիստոմատիկա), կազմեց և խմբագրեց Դրիգոր Դրիգորյան, Երևան, 1951, էջ՝ 239—258։ Քրիստոմատիկայի մեջ գետաբրրուղ Հերիփաթները վերցված են «Հայ ժողովրդական Հերիփաթներ» 1950 թ. Խողովածուից։ Հաշորդ ժանութագրությունների մեջ այս աղբյուրը կոչված է՝ «Հայ ժողովրդական բանահիւուուրյան եւստոմատիկա», 1951։

«Basme populare Armenie», Cartea Rusă, 1958, t. 39—66; Առաջնագովածում է Հայ ժողովրդական հերիաթիւնների սումբներն թարգմանությունը, որ կատարել են Ծանօթանա Վելիխովը Թեոդորյանուն և Սիրակ Կականյանը, օգտագործելով Ա. Ղանալանյանի կազմած ու խմբագրած «Հայ ժողովրդական հերիաթիւնների» ժողովածուն, Երևան, Պետհրատ, 1950 թ. Թարգմանված են ժողովածուի ոչ բոլոր հերիաթիւնները: Թարգմանությունը լուսա է տեսել Բուխարեստում, Շտուսական գիրք (Cartea Rusă) Հրատարակությամբ: Հաշորդ ժանոթագրությունների մեջ այս աղյուսուր կույտած է՝ «Basme populare Armenie», 1958:

2. ՀՈՒՇ-ՓԱՐԻՆ

(t, 49)

Տպագրվում է ըստ «Մարգարիտներ...» Ա գրքում Հրատարակված տեքստի,
 (էջ՝ 221—231), Բանհանավարք թողել է Հետևյալ ծանոթությունը. «Պատմեց
 1913 թ. Հուլիսի 15-ին Աշտարակ գյուղում, Նովյա գյուղի բնակիչ Ներսես Կարա-
 պետյան Տեր-Մինասյանը, 51 տարեկան անգրագետ գյուղացին։ Պարապում է.
 այդեպս թությամբ. սրա հայրը ևս շատ հերիտաժներ խնացող է եղել»:

«Մարգարիտներ...» Ա գրքի ցանկում այս հերթափառված է աշտարակցի Դավիթ Դավթյանին։ Հավանաբար վրիպակ է, քանի որ սույն հերթափառված է միայն տղամասակի ծանոթության վկայությունը, այլև պատմելու ոճը հաստատում է, որ հերթափառ ասացողոն Ներսես Կ. Տեր-Մինասյանն է։

Հերթաբն ունեցել է հետևյալ վերաբրածակությունները և թարգմանությունները. «Армянские сказки», 1930, № 193—209, 1933, № 216—228. «Армянские сказки». Издательство детской литературы. Москва—Ленинград, 1939, № 168—192, перевод с армянского Я. Хачатрянца, рисунки народного художника Армении М. Сарьяна.

Այսուհեղ Հերիաթների թարգմանությունը խմբագրված և հարմարեցված է ժամկանակական ընթերցանության պահանջներին։ Հաջորդ ժանութագրությունների մեջ օժանդակ այս աղբյուրը համառոտության համար կոլված է՝ «Արման-սկու սկազի», 1939։

«Հայ ժողովրդական ներիարենց», 1950, էջ՝ 21—32։

«Basme popolare Armenie», 1958, էջ՝ 24—38։

3. ԱՆԱ ԹԱՔԱՎՈՐԻ ՀԵԹԻԱԹԸ (էջ 62)

Տպագրվում է ըստ «Մարգարիտներ...» Ա գրքում հրատարակված տեքստի, (էջ՝ 9—27), Բանահավաքը թողել է հետեւյալ ժանութությունը. «Պատմեց 1912 թ. օգոստոսի 23-ին, Աշտարակ գյուղում, նույն գյուղացի Գևորգ Մկրտչյան Գևորգ-յանը, որը 60 տարեկան մի ժերութիւն է, անդրագիտ, պարագառ է այգեպանությամբ և հերիմությամբ, որի պատճեռով հաճախ ճանապարհորդում է շրջակա գյուղերն ու գավառները։ Ետք աշխույժ և խելացի անձնավորություն է»։

4. ԱԲԴԱՐ ԹԱՔԱՎՈՐ (էջ 83)

Տպագրվում է ըստ «Մարգարիտներ...» Ա գրքում հրատարակված տեքստի, (էջ՝ 28—40), Հերիաթը գրի է առնված 1912 թ. օգոստոսի 25-ին, Աշտարակ գյուղում, ասացողը Գևորգ Մ. Գևորգյանն է (տես № 3 Հերիաթի ժանութագրությունը)։

5. ՓԵՏԵ ԶԻՆ (էջ 98)

Տպագրվում է ըստ «Մարգարիտներ...» Ա գրքում հրատարակված տեքստի, (էջ՝ 191—197), Հերիաթը գրի է առնված 1913 թ. Հուլիսի 15-ին, Աշտարակ գյուղում, ասացողը Ներսես Կ. Տեր-Մինասյանն է (տես № 2 Հերիաթի ժանութագրությունը)։

6. ՓԱՌՉԱ-ՓԱՀԱՀՎԱՆ (էջ 106)

Տպագրվում է ըստ «Մարգարիտներ...» Բ գրքում հրատարակված տեքստի, (էջ՝ 185—196), Բանահավաքը թողել է հետեւյալ ժանութությունը. «Պատմեց 1914 թ. փետրվարի 14-ին Փարափի գյուղում Գևորգ Պետրոսյան վաթուռնամյա անդրագիտ գյուղացին, որ պարագառ է այգեպանությամբ»։

7. ՀՈՒՐԻ ԹԱՐԱՎՈՐԻ ԱԽՉԱԿ ՀԵՖԻԱԹԸ
(էջ 120)

Տպագրվում է ըստ «Մարդարիտներ...» Ա գրքում հրատարակված տեքստի,
(էջ՝ 47—62): Հերիաթը գրի է առնվել 1912 թ. օգոստոսի 28-ին, Աշտարակ գյու-
ղում, ասացող Գ. Մ. Գևորգյանն է (տես № 3 հերիաթի ժանոթագրությունը):
Բանահավաքը ծանոթության մեջ հայտնում է, որ ասացող Գ. Մ. Գևորգյանը
ու հերիաթը սովորել է Դարավշակում՝ Զբաղվելից Կարապետ Մանուկյանից:

8. ՕՀԱՆ ՌԵՆՉՊԱՐԻ ՏՂԻ ՀԵՖԻԱԹԸ
(էջ 137)

Տպագրվում է ըստ «Մարդարիտներ...» Ա գրքում հրատարակված տեքստի,
(էջ՝ 63—73): Հերիաթը գրի է առնվել 1912 թ. սեպտեմբերի 26-ին, Աշտարակ
գյուղում, ասացող Գ. Մ. Գևորգյանն է (տես № 3 հերիաթի ժանոթագրությունը):
Հերիաթը ունեցել է հետեւալ հրատարակությունները.

«Արմանակական սպառազնություն», 1933, էջ՝ 254—268:

«Հայ ժողովրդական ներկարներ», 1950 թ., էջ՝ 139—150:

«Հայ ժողովրդական ներկարներ», Հայոցհանրատ, Երևան, 1956 թ., էջ՝ 24—33
(«Բանշղարի տղան վերագրով»): Ժողովածություն կազմել է Ա. Նազինյանը, գե-
ղարվեստական ձեռագործությունը և իլլուստրացիաները՝ ժողովածության նկարի Հ. Կո-
չոյանին: Մեզ հետարրերը հերիաթները վերցված են նախորդ ժողովածությունից և
մասնակի մշակման են ներկարված՝ հաշվի առնելով մանկա-պատասխանեկան ընթեր-
ցանության պահանջները: Հաշորդ՝ ծանոթագրությունների մեջ օժանդակ այս աղ-
բյուրը նշված է՝ «Հայ ժողովրդական ներկարներ», 1956:

«Basme popolare Armenie», 1958, էջ՝ 158—171:

9. ԱԽՉԱԿ ՏՂԻ ՆԱՎԱՐ
(էջ 149)

Տպագրվում է ըստ «Մարդարիտներ...» Բ գրքում հրատարակված տեքստի,
(էջ՝ 227—236): Հերիաթը գրի է առնվել 1914 թ. փետրվարի 18-ին, Փարավի գյու-
ղում, ասացողն է փարավեցի Գևորգ Դիլանյանը, հայտնի հերիաթասաց Անթա-
ռամ Մարդարյանի սրբին (Անթառամ Մարդարյանի մասին տես սույն հատորի
№ 14 հերիաթի ժանոթագրությունը): Մի այլ հերիաթի («Էջի հերիաթի») տողա-
տակին («Մարդարիտներ...» թ., 237) սույն ասացողի մասին բանահավաքը հայտ-
նում է. «Գևորգը Անթառամ Մարդարյանի ավագ սրբին է, 18 տարեկան, փոքր
ինչ զբաղեցրած»:

10. ՆԱԶԱՐ-ՕՂԼՈՒ ՀԵՖԻԱԹԸ
(էջ 161)

Տպագրվում է ըստ «Մարդարիտներ...» Բ գրքում հրատարակված տեքստի,
(էջ՝ 40—54): Բանահավաքը թողել է հետեւալ ծանոթությունը. «Պատմեց 1913 թ.
Հուլիսի 8-ին, Օշական գյուղում, նույն գյուղացի նիկողայոս Տեր-Մերուվրյանց,
55 տարեկան, փոքր ինչ զբաղեցրած ծերունին, որ պարապում է այդեպահությամբ»:

11. ԹԵՐՄԱԿ ԹԱՔԱՎՈՐ

(էջ՝ 178)

Տպագրվում է ըստ «Մարդարիտներ...» Ա գրքում հրատարակված տեքստի, (էջ՝ 265—276): Բանահավաքը թողել է հետևյալ ժանոթությունը. «Պատմեց 1913 թ. հուկսի 17-ին, Օշական գյուղում, նույն գյուղացի Մկրտիչ Զարդարյան, 57 տարեկան ժերունին, որ այժմ ժամկոչ է և փոքր ինչ գրագետ»:

12. ՏԱՐԱԾՈՂ ԱԽՋԻԿ

(էջ՝ 192)

Տպագրվում է ըստ «Մարդարիտներ...» Բ գրքում հրատարակված տեքստի, (էջ՝ 18—21): Հերիաթի անվանումը հավանաբար բանահավաքին է: Բանահավաքը թողել է հետևյալ ժանոթությունը. «Պատմեց 1913 թ. սեպտեմբերի 1-ին, Օշականում, նույն գյուղացի Ավետիս Նազարյան անգրագետ շրադացպանը»:

Հերիաթը թարգմանաբար հրատարակվել է «Արմանական սկզբան», ժողովածուում, 1930, էջ՝ 149—153; 1933, էջ՝ 175—179:

13. ՍՈՒՐԱՅԻ ՍՈՎՀԴԱԹՅԱՐԻ ՈՐԹՈՒ ՀԵԹԻԱԹԸ

(էջ՝ 196)

Տպագրվում է ըստ «Մարդարիտներ...» Ա գրքում հրատարակված տեքստի, (էջ՝ 98—109): Հերիաթը գրի է առնվել 1912 թ. օգոստոսի 28-ին, Աշտարակ գյուղում, ասացողը նույն գյուղացի Գնորդ Մ. Գնորդյանն է (անս թ 3 հերիաթի ժանոթագրությունը):

14. ՍՈՒՐԻՍՈՒ ՀԵԹԻԱԹԸ

(էջ՝ 209)

Տպագրվում է ըստ «Մարդարիտներ...» Բ գրքում հրատարակված տեքստի, (էջ՝ 197—202): Հերիաթը գրի է առնվել 1914 թ. փետրվարի 17-ին, Փարախ գյուղում, ասացողը Անթառամ Մարդարյանն է, որի մասին հրատարակիլը մի այլ հերիաթի՝ («Հարամբաշու հերիաթը») տողատակի ժանոթության մեջ («Մարդարիտներ...» Բ, 207) հայտնում է հետևյալը. «Անթառամ Մարդարյան Մարդարյան քառասնամյա կինը այս և այլ շատ հերիաթներ սովորել է իր մորից, որի հայրը աշուու է եղել՝ Աշբը Հարո անունով: Անթառամը Փարպիում հայտնի է որպես լավ հերիաթ ասող»:

15. ԱՍԼԱՆ ԹԱՔԱՎՈՐ

(էջ՝ 216)

Տպագրվում է ըստ «Մարդարիտներ...» Ա գրքում հրատարակված տեքստի, (էջ՝ 230—300): Բանահավաքը թողել է հետևյալ ժանոթությունը. «Պատմեց 1913 թ. հուկսի 18-ին, Օշական գյուղում, նույն գյուղացի Գնորդ Առաքելյան անգրագետ, 55-ամյա ժերունին, որ պարապում է երկրագործությամբ. մեծ մասմբ ապրել է գյուղում»:

16. ԱՆԻՉԱՆԻ ՀԵԹԻԱԹԸ

(էջ 228)

Տպագրվում է ըստ «Մարգարիտներ...» Ա գրքում հրատարակված տեքստի, (էջ՝ 215—226), Հերիաթը գրի է առնվել 1914 թ. փետրվարի 19-ին, Փարզի դյուլում, ասացողը նույն գյուղի բնակչութիւնի Անթառամ Մարգարիանն է (տես № 14 հերիաթի ժանոթագրությունը):

17. ԱՐԵՎԱԼՍ ԵՎ ՕՇԱՆՈՒԿ

(էջ 236)

Տպագրվում է ըստ «Մարգարիտներ...» Ա գրքում հրատարակված տեքստի, (էջ՝ 148—152), Հերիաթը գրի է առնվել 1912 թ. օգոստոսի 22-ին, Աշտարակ գյուղում, ասացողը նույն գյուղի բնակիլ Ավետիս Դրիգորյանն է (տես № 1 հերիաթի ժանոթագրությունը):

Այս հերիաթի ունեցել է հետեւալ վերահրատարակությունները.

«Արմանական սկազք», 1930, էջ՝ 115—123; 1933, էջ՝ 143—149.

«Հայ ժողովրդական ներքարներ», 1950, էջ՝ 97—102;

«Հայ ժողովրդական բանահյուսուրյան ժեխառամատիա», 1951, էջ՝ 258—262.

«Basme popularce Armenie», 1958, էջ՝ 111—117.

18. ՈՒԿԵ ԳԱԲՈՒՆ ՏՂԻ ՀԵԹԻԱԹԸ

(էջ 241)

Տպագրվում է ըստ «Մարգարիտներ...» Ա գրքում հրատարակված տեքստի, (էջ՝ 198—220), Բանահյալարը թողել է հետեւալ ժանոթությունը. «Պատմեց 1913 թ. հունիսի 14-ին, աշտարակցի Դավիթ Դավիթյան քառասունեցինք տարեկան անգրագետ գյուղացին, որ պարագում է այգեպահությամբ և երկրագործությամբ»:

Հերիաթը վերահրատարակվել է «Հայ ժողովրդական ներքարներ» ժողովածուում, 1950, էջ՝ 157—182:

19. ԱՄԻՐ-ՇԱՄԻՐԻ ՀԵԹԻԱԹԸ

(էջ 269)

Տպագրվում է ըստ «Մարգարիտներ...» Ա գրքում հրատարակված տեքստի, (էջ՝ 83—97): Հերիաթը գրի է առնվել 1912 թ. օգոստոսի 27-ին, Աշտարակ գյուղում, ասացողը աշտարակցի Գևորգ Մ. Գևորգյանն է (տես № 3 հերիաթի ժանոթագրությունը):

20. ԶԵՅՐԱՆ-ԶՂԻ

(էջ 285)

Տպագրվում է ըստ «Մարգարիտներ...» Ա գրքում հրատարակված տեքստի, (էջ՝ 74—82): Հերիաթը գրի է առնվել 1912 թ. փետրվարի 26-ին, Աշտարակ գյուղում, ասացողը աշտարակցի Գևորգ Մ. Գևորգյանն է (տես № 3 հերիաթի ժանոթագրությունը):

21. ԴԱՎԹԻ ՀԵՔԻԱԹԸ

(էջ՝ 296)

Տպագրվում է ըստ «Մարդարիտներ...» թ գրքում հրատարակված տեքստի, (էջ՝ 22—29): Հեքիաթը գրի է առևկե, 1913 թ. Հուլիսի 7-ին, Յշական գյուղում, աստցողը օշականցի Նիկողայոս Տեր-Մեսրովբյանցն է (տես № 10 հեքիաթի ժամանակագրությունը):

22. ՀՐԱՑԻ ՀԵՔԻԱԹԸ

(էջ՝ 316)

Տպագրվում է ըստ «Մարդարիտներ...» Ա գրքում հրատարակված տեքստի, (էջ՝ 41—46): Հեքիաթը գրի է առևկել 1912 թ. օգոստոսի 27-ին, Աշտարակ գյուղում, ասացողը աշտարակցի Գևորգ Մ. Գևորգյանն է (տես № 3 հեքիաթի ժամանակագրությունը):

23. ԱՎՉՈՒ ՏՂԻ ՀԵՔԻԱԹԸ

(էջ՝ 323)

Տպագրվում է ըստ «Մարդարիտներ...» Ա գրքում հրատարակված տեքստի, (էջ՝ 252—264): Բանահավաքը ծանոթության մեջ նշում է, որ Հեքիաթը պատմել է 1913 թ. օգոստոսի 21-ին, Օշական գյուղում, նույն տեղացի Պետրոս Մուքայելյանը: Մի այլ հեքիաթի (անուրողվաճախ) ծանոթության մեջ («Մարդարիտներ...» Ա, 232) բանահավաքը հայտնում է, որ օշականցի Պետրոս Մուքայելյանը հիսնամյա անգրագիտ գյուղացին, ջրաղացան է. «Երա հայրը և պապը նշանավոր հեքիաթ ասացողներ են եղել. հեքիաթների մեծ մասը նա յուր հորիցն է սովորել, իսկ վերցինս՝ պապից, շարունակ թե՛ ջրաղացում և թե՛ օդաներում նա հեքիաթ է ասում»:

Այս հեքիաթը վերահրատարակվել է «Հայ ժողովրդական ներքիաներ» ժողովածուում, 1950, էջ՝ 125—138:

«Basme popolare Armenie», 1958, էջ՝ 141—157:

24. ՄՈՒՐԶԻ ՀԵՔԻԱԹԸ

(էջ՝ 338)

Տպագրվում է ըստ «Մարդարիտներ...» թ գրքում հրատարակված տեքստի, (էջ՝ 175—184): Բանահավաքը թողել է հետեւյալ ծանոթությունը. «Պատմեց 1914 թ. փետրվարի 19-ին, Փարավի գյուղում, նույն գյուղացի Խաչատուր Բամբազյան բառասնամյա, փոքր ինչ գրագետ գյուղացին, որ պարապում է գլխավորապես այգեպանությամբ»:

25. ԶՈՓՉՈՒ ՀԵՔԱՄԲԸ

(էջ՝ 349)

Տպագրվում է ըստ «Մարդարիտներ...» թ գրքում հրատարակված տեքստի,
(էջ՝ 222—226): Հերիաթը գրի է առնվել 1914 թ. փետրվարի 17-ին, Փարափ
գյուղում, ասացողն է նույն գյուղի բնակչութիւն Անթառամ Մարգարյանը (տես
№ 14 Հերիաթի ժանոթագրությունը):

Այս հերիաթը ունեցել է հետևյալ վերահրատարակությունները:

«Հայ ժողովրդական ներկարներ», 1950 թ., էջ՝ 151—156;

«Հայ ժողովրդական ներկարներ», 1956 թ., էջ՝ 88—92;

«Basme populaire Arménie», 1958 թ., էջ՝ 172—178:

26. ՎԱՐԴԻԹԵՐ

(էջ՝ 355)

Տպագրվում է ըստ «Մարդարիտներ...» թ գրքում հրատարակված տեքստի,
(էջ՝ 241—251): Բանահավաքը թողել է հետևյալ ժանոթությունները. «Պատմեց
1914 թ. փետրվարի 15-ին, Փարափ գյուղում, Հարեթնակ Վարդանյանը, որ սո-
վորի էր յուր Հարից, նույնպես նշանավոր հերիաթ ասողից»: Մի այլ հերիաթի
(«Զարարա») ժանոթության մեջ («Մարդարիտներ...» թ., 252) բանահավաքը հայտ-
նում է, որ փարափեցի Հարեթնակ Կիրոսյան-Վարդանյանը 55 տարեկան է, պա-
րագում է երկրագործությամբ և այգեպանությամբ: Զմեռը հաճախ օգաներում
հերիաթ է ասում:

Այս հերիաթն ունեցել է հետևյալ վերահրատարակությունները.

«Ընտիր էջեր նայ գրականուրյան», (սկզբից մինչև մեր օրերը), Երևան, Հայ-
պետրատ, 1946, էջ՝ 82—89: Այս անթոլոգիայում ժողովրդական բանահյուսու-
թյան նյութերի մեջ, որը պատրաստել է պրոֆ. Կ. Մելիք-Օհանշանյանը, տեղ է
գտել մեզ հետարրրող երկու հերիաթ՝ արտասպակած են նր. Լալայանի «Մարդա-
րիտներից...»: Հաշորդ ժանոթագրությունների մեջ օժանդակ այս աղբյուրը նշված
է «Ընտիր էջեր նայ գրականուրյան», 1946:

«Հայ ժողովրդական ներկարներ», 1950, էջ՝ 85—96;

«Basme populaire Arménie», 1958 թ., էջ՝ 97—110:

27. ՀԱՐԱՄԲԱՇՈՒ ՀԵՔԱՄԲԸ

(էջ՝ 368)

Տպագրվում է ըստ «Մարդարիտներ...» թ գրքում հրատարակված տեքստի,
(էջ՝ 207—214): Հերիաթը գրի է առնվել 1914 թ. փետրվարի 15-ին, Փարափ
գյուղում, ասացողը նույն գյուղի բնակչութիւն Անթառամ Մահտեսի Մարդարյանն
է (տես № 14 Հերիաթի ժանոթագրությունը): Ըստ բանահավաքի ժանոթության,
Անթառամ Մարդարյանն այս հերիաթը սովորել է իր մորից:

28. ՀԱԽԻ ՈՒ ՆԱՇԱԽԻ ՀԵԶԻԱԲԸ

(էջ 377)

Տպագրվում է ըստ «Մարգարիտներ...» թ գրքում հրատարակված տեքստի, (էջ՝ 203—206): Հերիաթը գրի է առնվել 1914 թ. փետրվարի 16-ին, Փարպի գյուղում, ասացողն է նույն գյուղի բնակչուհի Անթառամ Մարգարիանը (տես № 14 հերիաթի ժանոթագրությունը):

Այս հերիաթը թարգմանաբար հրատարակվել է «Արմանակ» ժողովածում, 1930, էջ՝ 223—227, 1933, էջ՝ 241—245:

29. ՍՈՅԱՄԱՍԱՋ ԽԱՆՂՄԻ ՀԵԶԻԱԲԸ

(էջ 382)

Տպագրվում է ըստ «Մարգարիտներ...» Ա գրքում հրատարակված տեքստի, (էջ՝ 153—168): Հերիաթը գրի է առնվել 1912 թ. օգոստոսի 24-ին, Աշոտարակ գյուղում, ասացողն է աշտարակցի Գևորգ Մ. Գևորգյանը (տես № 3 հերիաթի ժանոթագրությունը): «Մարգարիտներ...» Ա գրքի տանկում այս հերիաթը սխալ-մամբ վերագրված է Ավետիս Գրիգորյանին:

30. ՈՒՀԱՆ ԱՇԾՎՆ ՈՒ ՔՈՍԵՆ

(էջ 400)

Տպագրվում է ըստ «Մարգարիտներ...» Ա գրքում հրատարակված տեքստի, (էջ՝ 246—251): Հերիաթը գրի է առնվել 1913 թ. օգոստոսի 21-ին, Օշականում, ասացողն է օշականցի Գետրոս Մուկայելյանը (տես № 23 հերիաթի ժանոթագրությունը):

31. ԶՈՒԿ ՏՊԱՆ

(էջ 407)

Տպագրվում է ըստ «Մարգարիտներ...» Թ գրքում հրատարակված տեքստի, (էջ՝ 11—17): Հերիաթը գրի է առնված 1913 թ. օգոստոսի 29-ին, Օշականում: Հրատարակիլոր հայտնում է, որ այս հերիաթը պատմել է օշականցի Ավետիս նազարյանը, բայց դա կասկած է հարուցում:

Ավետիս նազարյանի մասին, նրա պատմած մյուս հերիաթների ժանոթության մեջ («Տղա դարձող աղջիկօք»—սույն հատորի № 12 հերիաթը՝ «Մարգարիտներ...» թ, 18 և «Իր հարսին աշը դնող թագավորը»—սույն հատորի № 29 հերիաթը՝ «Մարգարիտներ...» Ա, 301) բանահավաքը հայտնում է, որ նա զրադացպան է, իսկ այս հերիաթի ժանոթության մեջ հայտնում է, որ պարապում է այգեպանությամբ և 55 տարեկան ծերումի է, Տարրերվում են նաև գրի առնելու ժամանակը. վերը հիշված երկու հերիաթները գրի են առնված 1913 թ. սեպտեմբերի 1-ին, իսկ սույն հերիաթը գրի է առնված 1913 թ. օգոստոսի 29-ին: Կարծում ենք, որ սույն հերիաթ պատմողը օշականցի Նիկողայոս Տեր-Մեսրովյանցն է՝ «Դավթի հերիաթը» (տես սույն հատորի № 21 հերիաթը՝ «Մարգարիտ-

հեր... թ, 22) և «Նալար-օղու Հերիաթը» (տես սույն հատորի № 10 Հերիաթը՝ «Մարգարիտներ... թ, 40) պատումների ասացողը: Մեր ենթադրությունը հաստատում է Նիկողայոս Տեր-Մեսրովյանցի մասին հայտնած տեղեկության զուգագիպումը սույն Հերիաթի ժանոթության մեջ 55-ամյա ծերունու և այդեպահնությամբ զրադիվելու փաստին: Համեմատելով Ավ. Նազարյանի և Ն. Տեր-Մեսրովյանցի պատմած Հերիաթները, տեսնում ենք, որ սույն շառակ տղան Հերիաթը պատմելու իր սեռով ու առանձնահատկություններով հակված է դեպի Ն. Տեր-Մեսրովյանցի Հերիաթները:

32. ՀԱԼՎԱԶՈՒ ՀԱՇԿԵՐՏԸ (ել 415)

Տպագրվում է ըստ «Մարգարիտներ... թ գրքում հրատարակված տեքստի, (էջ 261—267): Բանահավաքը թողել է հետեւյալ ժանոթությունը. «Փատմեց 1914 թ. փետրվարի 17-ին, Փարապի գյուղում, նույն գյուղացի հաշատուր Ղազարյան քանչինգամյա, փոքր ինչ գրագետ երիտասարդը, որ սովորել է յուր նշանավոր Հերիաթ ասող հորից, այժմ վախճանված, պարապում է այդեպանությամբ և երկրագործությամբ: Եաւ ալքարաց և ճարապիկ երիտասարդ է»:

33. ԳՅՈՒՆՉԱՆԻ ՀԵՔԻԱԹԸ (ել 424)

Տպագրվում է ըստ «Մարգարիտներ... թ գրքում հրատարակված տեքստի, (էջ 110—124): Հերիաթը գրի է առնվել 1912 թ. օգոստոսի 27-ին, Աշտարակ գյուղում, ասացողը աշտարակցի Գևորգ Մ. Գևորգյանն է (տես № 3 Հերիաթի ժանոթագրությունը):

34. ԽՈՍՐՈՎ-ՇԱՀ (ել 441)

Տպագրվում է ըստ «Մարգարիտներ... թ գրքում հրատարակված տեքստի, (էջ 232—245): Հերիաթը գրի է առնվել 1913 թ. օգոստոսի 20-ին, Օշական գյուղում, ասացողն է օշականցի Պետրոս Մուրայելյանը (տես № 23 Հերիաթի ժանոթագրությունը):

35. ԿԱՐԱՊԵՏ-ԲԵԿԻ ՀԵՔԻԱԹԸ (ել 456)

Տպագրվում է ըստ «Մարգարիտներ... թ գրքում հրատարակված տեքստի, (էջ 169—188): Հերիաթը գրի է առնվել 1912 թ. օգոստոսի 21-ին, Աշտարակ գյուղում, ասացողն է աշտարակցի Ավետիս Գրիգորյանը (տես № 1 Հերիաթի ժանոթագրությունը):

36. ԷՄԻ ՀԵՔԻԱԹԸ

(էջ 478)

Տպագրվում է ըստ «Մարգարիտներ...» Ա գրքում հրատարակված տեքստի.
(էջ՝ 237—240): Հերիաթը գրի է առնվել 1914 թ. փետրվարի 14-ին, Փարավի գյու-
ղում, ասացող նույն տեղացի Գևորգ Դիլանյանն է, (տես № 9 Հերիաթի ժանո-
թագրությունը):

Այս հերիաթը ունեցել է հետեւյալ վերահրատարակությունները.

«Արմանակներ», 1930, էջ՝ 210—215; 1933, էջ՝ 229—234:

«Հայ ժողովրդական ներքիաներ», 1950, էջ՝ 477—481:

«Ընակր էջեր, նայ գրականուրյուն», 1946, էջ՝ 80—81:

37. ԹԱՂՄԱՍԱԼ ՏՊԻ ՀԵՔԻԱԹԸ

(էջ 483)

Տպագրվում է ըստ «Մարգարիտներ...» Ա գրքում հրատարակված տեքստի.
(էջ՝ 144—147): Հերիաթը գրի է առնվել 1912 թ. օգոստոսի 28-ին, Աշտարակ
գյուղում, ասացող նույն գյուղի բնակիչ Ավետիս Գրիգորյանն է (տես № 1 Հե-
րիաթի ժանոթագրությունը):

Այս հերիաթը վերահրատարակվել է «Հայ ժողովրդական ներքիաներ» ժողո-
վածուում, 1950, էջ՝ 439—442:

38. ԽՄԱՍՈՒԽՆ ԻՄԻ ՀԵՔԻԱԹԸ

(էջ 488)

Տպագրվում է ըստ «Մարգարիտներ...» Ա գրքում հրատարակված տեքստի.
(էջ՝ 277—289): Հերիաթը գրի է առնվել 1913 թ. Հուլիսի 17-ին, Օշականում.
ասացողն է նույն գյուղացի Մկրտիչ Զարգարյանը (տես № 11 Հերիաթի ժանո-
թագրությունը):

Այս հերիաթն ունեցել է հետեւյալ վերահրատարակությունները.

«Հայ ժողովրդական ներքիաներ», 1950, էջ՝ 337—350:

«Հայ ժողովրդական բանահյուսուրյան երեսումատիա», 1951, էջ՝ 279—291:

«Հայ ժողովրդական ներքիաներ», 1956, էջ՝ 55—59 (կրծատված):

39. ԻՐ ՀԱՐՄԻՆ ԱԶՔ ԴՆՈՂ ԹԱՔԱՎՈՐԸ

(էջ 503)

Տպագրվում է ըստ «Մարգարիտներ...» Ա գրքում հրատարակված տեքստի.
(էջ՝ 301—308): Հերիաթը գրի է առնվել 1913 թ. սեպտեմբերի 1-ին, Օշակա-
նում, ասացող նույն գյուղացի Ավետիս Նազարյանն է (տես № 12 Հերիաթի ժա-
նոթագրությունը): Հերիաթի անվանումը հավանաբար բանահյալարինն է:

Այս հերիաթը թարգմանաբար վերահրատարակվել է «Արմանակներ»
հողովածուում, 1930, էջ՝ 132—135; 1933, էջ՝ 158—161:

40. ԹՅՈՒՄԻ, ԹՈՓԱՎԸ ՈՒ ՔՈՌԻ ՆԱՊԱԾ

(էջ 507)

Հպագրվում է ըստ «Մարգարիտներ»... թ գրքում հրատարակված տեքստի,
(էջ՝ 256—260): Հերիաթը դրի է առնվել 1914 թ. փետրվարի 19-ին, Փարսի
գյուղում, ասցողը փարսկեցի Խաչատուր Թամբաղյանն է (տես № 34 Հերիաթի
ժամանակագրությունը):

Այս Հերիաթն ունեցել է հնայալ թարգմանությունները.

«Արմանակ», 1930, էջ՝ 136—141; 1933, էջ՝ 162—167:

«Արմանակ», 1939, էջ՝ 23—28:

41. ԹԱՐԱՎՈՐ ԳՈՂԱԶՈՂ ՏՊԱՆ

(էջ 512)

Հերիաթի գրառման ձեռագիրը, որը հիմք է ժառայել ներկա հրատարակու-
թյան համար, պահպում է Հայկական ՍՍՌ Դիտությունների ակադեմիայի Մ. Արեգ-
յանի անվան Գրականության ինստիտուտի ժողովրդական բանահյուսության սեկ-
տորի արխիվում:

Ձեռագիր նյութերը պահպանվում են Ակադեմիայի Մ. Արեգյանի անվան
Գրականության ինստիտուտի ժողովրդական բանահյուսության սեկտորի արխի-
վում: Գրանք ինստիտուտի նախկին բանահավաք, իսկ այժմ Պետական պատմա-
կան թանգարանի ազգագրական բաժնի վարիչ, Ֆիլոռոգիական Դիտությունների
թեկնածու Վարդ Բղոյանի 1938, 1939, 1945 թվականներին Աշտարակի և Կոտայքի
շրջաններում գրի առաջ Հերիաթներ են. (տե՛ս՝ «Ժողովրդական Աշտարակի շրջաններում», 1939 թ., 1945 թ. և «Ժողովրդական Աշտարակի շրջաններում», 1938 թ., 1945 թ. ձեռագիր տեսարերը, որտեղ կան նաև ժողովրդական
բանահյուսության այլ ժանրերին պատկանող նյութեր):

Հաշորդ ձանօթագրությունների մեջ համառոտության համար նշված է՝ ինս-
տիտուտի բանահյուսության արխիվ:

Պատմել է Աշտարակի շրջանի Փարսի գյուղի բնակիլ Սարգիս Գրիգորյանը,
դրի է առել Վարդ Բղոյանը 1939 թ. Հունվարին: Բանասաց Ա. Գրիգորյանի մա-
սին բանահավաքը հայտնում է, որ 29 տարեկան է, գրագետ է, ունի ասելու
շնորհը և գիտի բազմաթիվ սրախոս առակներ:

Հերիաթն առաջին անգամ տպագրվել է «Հայ ժողովրդական ներկարներ» ժո-
ղովածուում, 1950, էջ՝ 465—467:

42. ՀՆԱՐԱԳԵՏ ՔԱԶԱԼԸ

(էջ 515).

Հերիաթի գրառման ձեռագիրը, որը հիմք է ժառայել ներկա հրատարակու-
թյան համար, պահպանվում է ինստիտուտի բանահյուսության արխիվում: Հե-
րիաթը պատմել է Կոտայքի շրջանի Քրվեժ գյուղի բնակիլ Անդրանիկ Սարգսյա-
նը, դրի է առել Վ. Բղոյանը 1938 թ. գեկտեմբերին:

Հերիաթի անվանումը բանահավաքինն է: Բանասաց Ա. Սարգսյանի մասին

Հայտնում «Աստված Խրատեց տերտերին» հերթի ժանոթության մեջ (այդ հերթիքը տես սույն Հատորի Հավելված № 8), որից պարզվում է, որ բանասացը 31 տարեկան է, կիսագրագետ, ծնվել է նույն գյուղում (Զրվեծ), նախնիքը Պարսկահայաստանից են (Սպահան):

Այս հերթիքն առաջին անգամ տպագրվել է «Հայ ժողովրդական ներքիներ» ժողովածուում, 1950, էջ՝ 413—417:

43. ՆՈՐԱՐ ՍԻՄՈՆԸ (էջ 520)

Հերթիքի գրառման ձեռագիրը, որը հիմք է ժառայել ներկա հրատարակության համար, պահպանվում է ինստիտուտի բանահյուսական արխիվում: Հերթիքը պատմել է Աշտարակ գյուղի բնակիչ լեռն Մարտիրոսյանը, գրի է առել Վարդ Բդոյանը, 1939 թ. Հունվարին: Բանահայացը ասացողի մասին տեղեկությունները լի հազորդում:

Հերթիքն առաջին անգամ տպագրվել է «Հայ ժողովրդական ներքիներ» ժողովածուում, 1950, էջ՝ 419—420:

«Basma popolare Armenie», 1958, էջ՝ 388:

44. ԹԻԹԵՌ ՄՈՐԱՉՈՒՑՐԸ (էջ 522)

Հերթիքի գրառման ձեռագիրը, որը հիմք է ժառայել ներկա հրատարակության համար, պահպանվում է ինստիտուտի բանահյուսական արխիվում: Հերթիքը պատմել է Կոտայքի շրջանի Քրվեծ գյուղի բնակիչ Հովհաննես Հակոբշանյանը, գրի է առել Վարդ Բդոյանը 1938 թ. դեկտեմբերին: Ասացողի մասին բանահայացը տեղեկություններ է հայտնում «Կոլտնտեսական Հերթիքի» ժանոթագրության մեջ, ըստ որի Հ. Հակոբշանյանը «Ե55 տարեկան կիսագրագետ, աշխուժ տաշասահր, ունեոր կոլտնտեսական է: Ունի ասելու մեծ վարպետություն թե Հերթիքների, թե առակ-առածների, թե ժողովրդական ու աշուղական երգերի բնագավառում: Բանասացի նախնիքը Արևմտյան Հայաստանից են, իսկ ինքը խոսում է նաև ադրբեջաներեն:»

Հերթիքն ունեցել է հետևյալ վերահրատարակությունները.

«Հայ ժողովրդական ներքիներ», 1950, էջ՝ 449—450:

«Հայ ժողովրդական բանահյուսուրյան երեսումատիա», 1951, էջ՝ 315—316:

45. ՍՏԱԽՈՍ ՀՈՎԼՈՅԸ (էջ 524)

Հերթիքը հրատարակվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը գտնվում է ինստիտուտի բանահյուսական արխիվում: Հերթիքը պատմել է Կոտայքի շրջանի բնակիչ Բարեղամ Միմոնյանը, գրի է առել Վարդ Բդոյանը 1938 թ. նոյեմբերին: Բանասացի մասին կենսագրական տեղեկությունները լի հազորդվում:

46. ԱԳԱԼ ՀԱՐՈՒՏԱԾԸ

(էջ 527)

Հերիաթը հրատարակվում է առաջին անգամ։ Դրառման ձեռագիրը գտնվում է ինստիտուտի բանահյուսական արխիվում։ Հերիաթը պատմել է Կոտայքի շրջանի բնակիչները մասսացի բարեղամ Սիմոնյանը, զրի է առել Վարդ Թղոյանը 1938 թ. նոյեմբերին։ Բանասացի մասին կենսագրական տեղեկություններ լին հազորդվում։

47. ԱՆԿՈՒՆԸ ՏԵՐՏԵՐԸ

(էջ 530)

Հերիաթի գրառման ձեռագիրը, որը հիմք է ժառայիլ ներկա հրատարակության համար, գտնվում է ինստիտուտի բանահյուսական արխիվում։ Հերիաթը՝ պատմել է Կոտայքի շրջանի Թեղրաբակ գյուղի բնակչության նատու Հայրապետյանը, զրի է առել Վարդ Թղոյանը 1938 թ. գետեմբերին։ Բանասաց և Հայրապետյանի մասին բանահավաքը հայտնում է, որ նա կիսագրագետ կին է, գիտեական տերերների մասին բազմաթիվ սրախոսությունների նախնիքները մշեցիներ են։

Առաջին անգամ այս հերիաթը տպագրվել է «Հայ ժողովրդական ներկարներ» ժողովածուում, 1950, էջ՝ 427—428։
Վերաբարձրագրակի է «Հայ ժողովրդական ներկարներ» ժողովածուում, 1956, էջ՝ 80—81։

48. ԱՆԴՐԱԳԵՏ ՏԵՐՏԵՐԸ

(էջ 532)

Տպագրվում է ըստ «Հայ ժողովրդական ներկարներ», 1950, ժողովածուում հրատարակված տեքստի, (էջ՝ 433—434)։ Կազմողը ժողովածուի վերջում գրված ժանոթագրությունների մեջ այս հերիաթի կապակցությամբ հայտնում է հետևյալը։ Անսել է Աշտարակի շրջանի Սուլդի գյուղացի 63 տարեկան նրվանդ Թորոսյանը։ Գրի է առել Վ. Թղոյանը 1939 թվին։

Այս հերիաթը թարգմանաբար հրատարակվել է «Basme popolare Armenie» ժողովածուում, 1958, էջ՝ 384—385։

ՀԱԳԵՏԱԳՈՅՆ I.

1. ԱՂԲԵՐ-ՏՂԱ ԵՎ ՔԱՌՄԱԽԻՆ-ՄԱՍ ՓԱՐԻ

(էջ 537)

Տպագրվում է ըստ «Էմինյան աղքադրական ժողովածուի» Բ գրքում հրատարակված տեքստի, (Մոսկվա—Վաղարշապատ, 1901, էջ՝ 289—299)։ Բանահավաք Ս. Հայկունին հերիաթի առաջին էջի տողատակին նշում է։ Անսած է Կյամբեղ գյուղացի Ստեփան», իսկ հերիաթի վերնագրի տակ գրված է, «Ղրիմուկախան (Կոտայքից) բարբառով»։ Ասացողի՝ Կոտայքի Կյամբեղ գյուղի բնակիչ ոմն Ստե-

գանի մասին կենսագրական ոչ մի տեղեկություն չի հաղորդված, չի նշված նաև գրառման թվականը:

Թեմայով ու սյուժետային գծերով այս հերիաթը «Զեյրան-օղլի» հերիաթի տարրերակին է (տես սույն հատորի № 20 հերիաթը), մասնակի շեղումներով ու հավելումներով. օրինակ, Քառուն-ծամ Փարուն հափշտակող դեմ հոգու գաղտնիքի բացման էպիզոդը «Զեյրան-օղլի» հերիաթում լկա: Բայց պատմելու վարպետության ու լեզվի անազարտության տեսակետից սույն հերիաթն անթերի չէ. հերիաթի վերջին մասը բանահավաքը վերապատմել է, անմիշական գրառումը կորցրած լինելու պատճառով:

2. ԶՈՓԶԻ

(էջ 551)

Տպագրվում է ըստ «Մարգարիտներ...» թ գրքում հրատարակված տեքստի, (էջ՝ 5—10): Գրի է առնվել 1913 թ. օգոստոսի 19-ին, Օշական գյուղում, ասացող նույն գյուղի բնակիլ Գևորգ Առաքելյանն է (տես № 15 հերիաթի ծանոթագրությունը):

Հերիաթը թարգմանարար վերահրատարակվել է «Արմանական սպոռագագրում», 1930, էջ՝ 228—237; 1933, էջ՝ 346—352:

Այս հերիաթը ամբողջականության տեսակետից պակասավոր է, մեխանիկորեն իրար են կցված տարրեր սյուժեներ.. սկսվում է օձի կորված պոչի կախարդական զորության էպիզոդով, դրան հաջորդում է գրազր և տանուզ տալը, ապա՝ աստծուն գանգատ գնացող մարդը և նրան հանդիպած կանանց ու ձիերի խընդիրը և վերջապես՝ աստծո հրամանով արենի հակառակ կողմից ծագելը և տանուզ տվածը շահելը, որոնք օրգանապես չեն ձուլվում: Առանձին վերցրած էպիզոդները հետաքրքրական են:

3. ԶԱՐԱՐ

(էջ 557)

Տպագրվում է ըստ «Մարգարիտներ...» թ գրքում հրատարակված տեքստի, (էջ՝ 252—255): Հերիաթը գրի է առնվել 1912 թ. փետրվարի 14-ին, Փարպիգյուղում, ասացող նույն գյուղի բնակիլ Հարեթնակ Կ. Վարդանյանն է (տես № 25 հերիաթի ծանոթագրությունը):

Սյուժետային որոշ գծերով այս հերիաթը հիշեցնում է «Կարապետ-բնեկի» հերիաթը (սույն հատորի № 35 հերիաթը), բայց այստեղ չի պահպանված հերիաթի թեմատիկ ամբողջականությունը:

4. ՕՇԱՆ ՏԱԶՈՒ ՀԵՔԻԱԹԸ

(էջ 561)

Հերիաթը հրատարակվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը գտնվում է ինստիտուտի բանահյուսական արխիվում: Պատմել է Սոսայքի շրջանի Ողջարերդ գյուղի բնակիլ Սահմակ Խաչատորի Խաչատրյանը, գրի է առել Վարդ Ռդոյանը 1945 թ. հոկտեմբերի 28—29, Ողջարերդ գյուղում: Բանահավաքը մանրամասն

տեղեկություններ է Հազորդում ասացողի մասին, որն ամբողջությամբ դնում ենք այստեղ:

«Առաջակ Խաչատրյանը ծնվել է 1877-ին Արևավաղի Ղարաբշշիշ գյուղում: Մանկության օրերից ի վեր զբաղվել է երկրագործությամբ և մեծացել է շարքաշ կյանքով: Նա Կոտայքի շրջանի Ողջարերդ գյուղն է գաղթել 1914-ի կոտորածեների ժամանակ: Այդ կոտորածների ժամանակ Սահակ Խաչատրյանը կորցրել է 30-ից ավելի հարազատների, որոնց տանշանքին ականատես լինելով, նա գրիթիննեցած է: Այդ պատճառով նրան հենց խնդիր էլ անվանում են Ողջարերդում:

Թուրք հարազատները, բացի իր փոքր եղբորից, զո՞ւ են գնացել այս ժամանակ, երբ Սահակը զենքը ձեռքին կռվելիս է եղել Թուրքերի հորդաների դեմ: Խոկերը սկսվում է փախե-փախից, Սահակը շարակում է եղբորն ու բառասուն հոգու հետ փախչում է զեպի Վան: Վանա լճի ափին, եղեգների ու ճահճների մեջ, նայդ բառասուն հոգու հետ մի ստորերկրյա ապաստան է պատրաստում, ուր 15 օր թարնվում են Թուրքերից:

Սահակի պատմելով, այդ ապաստարանը կիսով շափ ջուր է եղել, որի մեջ ամբողջ ցերեկը նստելիս են եղել և գիշերները դուրս գալով այնտեղից, բացադակում արածել են:

Սահակ Խաչատրյանը անգրագետ է և հերիաթասաց: Գիտե բազմաթիվ հրաշապատում և այլ հերիաթներ ու առակներ: Այդ բոլորը նա սովորել է Ղարաբեշիցում: Հերիաթներին նազ է ասում, իսկ առակներին՝ մասալա:

Հեղուն սարսափելի խառնուրդ է ներկայացնում: Նրա մեջ կան իր Հայրենիքութիւնի բարբառի, Քրիստության Ողջարերդում բնակվելու ապրել է), որ միննույն է ասել՝ Արարատյան բարբառի, Կարնո բարբառի (Պարսի ճյուղի), Վանի, Թիրերի և այլ գավառաբարբառների ուժեղ կամ թույլ տարրերը: Դրա պատճառը Ողջարերդում նույն ժողովուրդների հետ ապրելն է:

Սահակ բիձեն այժմ աշխատում է կոլխոզում:

Այս հերիաթը թեմայով ու սյուժեալին զարգացմամբ «Կարապետ-բեկի հերիաթի» (սույն հատորի № 35 հերիաթը) տարբերակն է, բայց զիշում է նրան պատմելու վարպետության և լեզվի անազարտության տեսակետից:

5. ԽՈՐՀՄԻԱՎՈՐ ԱՅՍԸ

(էջ 572)

Տպադրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը գտնվում է ինստիտուտի բանաճյուղական արխիվում: Պատմել է Կոտայքի շրջանի Մհուք գյուղի բնակիչ Վահրամ Սիմոնյանը, որի է առել Վարդ Բղոյանը 1938 թ. նոյեմբերին: Ասացողի մասին բանաճյուղը ծանոթության մեջ հայտնում է, որ նրա պապերը Վանա հայեր են, ինքը՝ կիսազրագետ է, 33 տարեկան:

Այս հերիաթը թեմատիկ բովանդակությամբ և սյուժեալին կառուցվածքով նմանվում է ամեաստուն իծեա հերիաթին (տես սույն հատորի № 38 հերիաթը), նկատելի փոփոխություններով ու շեղումներով:

6. ՊԱՌԱՎԻ ՏՂԻ ՀԵՔԻԱԲԸ

(էջ 576)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը գտնվում է ինստիտուտի բանահյուսական արխիվում: Պատմել է Աշտարակի շրջանի Եղվարդ գյուղի բնակիչը Ոսկան Հակոբի Թարայանը, գրի է առել Վարդ Թղոյանը 1945 թ., Բանահյակարը ժանոթության մեջ Ո. Թարայանի մասին հաղորդում է հետեւալ տեղեկությունները:

«Մենք է 1911 թ. Եղվարդի, Հողագործի ընտանիքում: Պատման հասակում շըրս-հինգ տարի բարորակություն է արել Եղվարդում և այլ գյուղերում: 1941 թ. կանչվել է բանակ, մասնակցել է Դրիմի ճակատամարտերին: Թեղոսիսիայում վիրավորվելուց և Նովորոսիյսկում բուժվելուց հետո գյուղ է վերադարձել 1943 թ. փետրվարին: Ունենալով հորինելու շնորհը, Ոսկանը գրել է մի քանի երգեր և երգում է հարմարեցրած եղանակներով: Այժմ կողխղողում հայտնի է որպես երգասաց և բամբառակ պատմող: Ոսկանը կիսագրագետ է»:

7. ՊԱՏԱՀԱԿԱՆ ՏԵՐՏԵՐԸ

(էջ 581)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը գտնվում է ինստիտուտի բանահյուսական արխիվում: Պատմել է Կոտայքի շրջանի Եղղովան գյուղի բնակիչը Ովհան Պողոսյանը, գրի է առել Վարդ Թղոյանը 1938 թ. նոյեմբերին: Սահմանադրության մեջ բանահավաքը ասացողի մասին հայտնում է, որ նա 45 տարեկան է, կիսագրագետ: Առույն հերթափթ առվորել է ժողովրդից: Այս հերթափթը թիմայով հիշեցնում է ունգրագետ տերտերի հերթափթը (առև առույն հատորի № 48 հերթափթը), որու հավելյալ էպիզոդներով:

8. ԱՍՏՎԱԾ ԽՐԱՏԵՑ ՏԵՐՏԵՐԻՆ

(էջ 584)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը գտնվում է ինստիտուտի բանահյուսական արխիվում: Պատմել է Կոտայքի Ջրվեժ գյուղի բնակիչ Անդրանիկ Մարգարյանը, գրի է առել Վարդ Թղոյանը 1938 թ. գեկտեմբերին: Բանահյավաքը ժանոթության մեջ հայտնվում է, որ ասացող Ա. Մարգարյանը 31 տարեկան է, կիսագրագետ: Ժնվել է նույն գյուղում (Ջրվեժ): Նախնիքը Պարսկահայաստանից են (Սպահան):

9. ԱՆԿՈԶ ՀՅՈՒՐԸ

(էջ 587)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը գտնվում է ինստիտուտի բանահյուսական արխիվում: Պատմել է Կոտայքի շրջանից Թարեղամ Միմոնյանը, գրի է առել Վարդ Թղոյանը 1938 թ. նոյեմբերին: Ասացողի մասին կինսագրահան տեղեկություններ չեն հղորդվում:

10. ԳԻՒ ԽԵԼՈՔՆԵՐԸ
(էջ 590)

Տպագրվում է առաջին անգամ՝ Դրառման ձեռադիրը գտնվում է ինստիտուտի բանահյուսական արխիվում։ Պատմել է Աշտարակ գյուղի բնակիչները Ստեփան Ղուկոյանը, զրի է առել Վարդ Բգոյանը 1939 թ. Շունվարին։ Ասացողի մասին կենացքական տեղեկություններ չեն հաղորդվում։

11. ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵԶԻԱՅԻ
(էջ 593)

Հերիաթի գրառման ձեռագիրը, որը հիմք է ժառայել ներկա հրատարակության համար, գտնվում է ինստիտուտի բանահյուսական արխիվում։ Պատմել է Կոտայքի շրջանի Ջրվեժ գյուղի բնակիչները Հովհաննես Հակոբշանյանը (տես № 44 Հերիաթի ժանոթագրությունը). զրի է առել Վարդ Բգոյանը 1938 թ. գեկտեմբերի 9-ին։ Բանահյավարը տեղեկացնում է, որ Համագյուղացիների վկայությամբ և իր՝ ասացողի խոստվանությամբ այս հերիաթը հնարել է ինքը՝ ասացողը։

Հերիաթի առաջին անգամ տպագրվել է «Հայ ժողովրդական ներկարներ» ժողովածուում, 1950, էջ՝ 535—538 (որոշ կրնատումներով. «Անհատի տղան ու կոլխոզի աղջիկը վերնագրով»)։

Հերիաթը ներկայացվում է որպես նմուշ տրադիցիոն հերիաթային ձևերի փոփոխության ու նոր իմիտացիայի։ Հերիաթում եղած ադրբեջաներների բառացի թարգմանությունը կատարել է բանասիրական գիտությունների թեկնածու Աքպեր Մրկանչին։

ՀԱՅԵԼՎԱՅՐ II.
(էջ 599)

Սույն հավելվածում Աշտարակ գյուղի խոսվածքի համար, որպես օրինակ, բերված է «Երեխատ և Օձմանուկ» հերիաթը (№ 17), Օշական գյուղի խոսվածքի համար՝ «Տղա գարձող աղջիկը» (№ 12) և Փարպի գյուղի խոսվածքի համար՝ «Էծի հերիաթը» (№ 36)։

Հատորում տեղ գտած Կոտայքի գյուղերի համար օրինակներ չեն տրված, որովհետեւ այդ գյուղերի խոսվածքները տարբեր բարբառների խառնուրդ են և շատնեն արտասանական ու ձևարանական հետևողական օրինաշափություններ։

Հավելվածում տրված վերոհիշյալ հերիաթների բարբառային տառադարձությունը կատարել է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի կեզվի ինստիտուտի ավագ գիտական աշխատակից Հ. Մկրտչյանը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ա. Ղարիբյանի հսկողությամբ։

Բառարանի մեջ տրված են այս հատորում հանդիպող բարբառային դրվար հասկանալի բառերի, ոճերի ու դարձվածքների, ինչպես նաև օտար բառերի բացատրությունները:

Բառերի ու արտահայտությունների բացատրության ժամանակ նկատի է առելոված սույն հատորի տեքստերում պարունակող իմաստն ու առումը եթե նույն բառը կամ ոճը հերթափներում ունի մի բանի բառումներ ու իմաստային տարրերություններ, ապա այդ բառի բացատրության տակ տրվում են տարրեր իմաստները: Կամ բառեր ու արտահայտություններ, որոնք փոխարերական մտքով են օգտագործված, այդպիսի դեպքերում բառի բացատրությունից առաջ նշվում է՝ փոխ:

Բառերը, ոճերն ու դարձվածքները բառարանում տրված են այրբենական կարգով, հաշվի առնելով պատումների մեջ պահպանված հնչումն ու տառադարձությունը նրբեմն, բառին կից տրվում է տվյալ բառի հնչումնափոխված կամ տառադարձված այլ ձեռը:

Բառարանում օգտագործված են նաև հատորի տողատակերին դրված բանահավաքի բացատրությունները, երբեմն ճշտելով ու լրացնելով դրանք Շատ սահավ պատահում են բառեր ու արտահայտություններ, որոնք նեղ, տեղական ընույթուններ և դրվար է տալ դրանց ստույգ մեկնություններ, բառարանում այդպիսի բառերի դիմաց նշվում է՝ անսույց և կցվում հավանական ենթագրական բացատրությունը:

Հատուկ անունները և մի շարք կենցազային, ծիսական, առասպելական ու այլ տիպի երևույթներ ու առարկաներ արտահայտող բառերի բացատրությունները մանրամասնորեն չեն տրվում, հաշվի առնելով, որ դրանք բացատրվելու են տվյալ բնակավայրի հերթափներն ամփոփող վերջին հատորի անվանական և առարկայական ցանկերում: Այլ վերջին հատորում կտրվի նաև ընդհանուր բառարան՝ ընդգրիելով տվյալ բնակավայրի հերթափներում օգտագործված բառերը, ոճերն ու դարձվածքներն իրենց բոլոր առումներով ու իմաստով:

Սույն բառարանը պատրաստելիս հիմնականում օգտագործել ենք Տեղրան Նավասարդանցի «Բառգիրք Արարատյան բարբառու» (Տիֆլիս, 1903) և Սահակ Վարդապետ Ամատունու «Հայոց բառ ու բան» (Վաղարշապատ, 1912) աշխատությունները: Մասնակիորեն օգտագործել ենք նաև Հրազդա Անայանի «Հայերներն գավառական բառարանը» (Թիֆլիս, 1913), Ստեփանոս Մալուսյանցի «Հայերն բացատրական բառարանը» (Երևան, 1944), առներենից Հայերն, պարսպիերնից Հայերն և մի շարք այլ բառարաններ ու բառացանկեր:

Բառարանի մասնագիտական խմբագրությունը կատարել է Հ. Մկրտչյանը: